



Մամուլի հաղորդագրություն

ՄԱԿ-ի գործակալություններն ու ծրագրերը միավորում են ջանքերը «Ընդդեմ Չենդերային բռնության ակտիվության 16-օրյակ» քարոզարշավի համար

Երևան 25.11.2008թ.



Այսօր ՄԱԿ-ի Երևանյան գրասենյակում կայացավ Հայաստանում «Ընդդեմ Չենդերային բռնության ակտիվության 16-օրյակ» քարոզարշավի մեկնարկին նվիրված մամուլի ասուլիս:

Մամուլի ասուլիսին ելույթով հանդես եկան ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերով վարչության պետ Տկն. Լալա Ղազարյանը, ԱԺ պատգամավոր Արծվիկ Մինասյանը, ինչպես նաև ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի «Ընդդեմ Չենդերային բռնության Հարավային Կովկասում» ծրագրի ղեկավար, Հայաստանում «16-օրյակ քարոզարշավի» ազգային համակարգող Ջինա Սարգիզովան:

Քարոզարշավը կիրականացվի ՄԱԿ-ի մշտական համակարգողի, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի (UNFPA), ՄԱԿ-ի Ջարգացման Ծրագրի (UNDP), ՄԱԿ-ի հանրային տեղեկատվության վարչություն (UNDPI), Միգրացիայի միջազգային կազմակերպության (IOM), ՄԻԱԿ/ՁԻԱՀ-ի ՄԱԿ-ի միացյալ ծրագրի (UNAIDS), ինչպես նաև ՋԼՄ-ների ու մարդու իրավունքների և կանանց հիմնահարցերով զբաղվող մի շարք տեղական և օտարերկրյա կազմակերպությունների միացյալ ջանքերով:

Հայաստանում 16-օրյա քարոզարշավը նախատեսում է տարատեսակ միջոցառումներ, այդ թվում մամուլի ասուլիսներ, հասարակական լուսններ, սոցիալական տեսահոլովակների և ֆիլմերի ցուցադրում, հանդիպումներ ու սեմինարներ ՀՎ-ների, համայնքախեն կազմակերպությունների ուսանողների և տեղական իշխանությունների ներկայացուցիչների հետ Երևանում ու մարզերում:

Նախատեսված միջոցառումների ուշադրության կենտրոնում են կանանց նկատմամբ կիրառվող բռնության մշակութային և ազգային ասպեկտները, ներընտանեկան բռնությունը, թրաֆիքինգը և ՄԻԱԿ/ՁԻԱՀ-ի համաձայնագրերը: Մամուլի ասուլիսի ժամանակ բաժանվել է 16-օրյակի շրջանակներում կազմակերպվող միջոցառումների օրացույցը:

«Ընդդեմ Չենդերային բռնության ակտիվության 16-օրյակ»-ը միջազգային քարոզարշավ է, որը սկսվում է նոյեմբերի 25-ից, Կանանց դեմ բռնությունների վերացման միջազգային օրով, և տևում է մինչև դեկտեմբերի 10-ը, մարդու իրավունքների միջազգային օրը՝ խորհրդանշորեն կապելով Չենդերային բռնությունը և մարդու իրավունքները:

1989թ.-ի կանադացի 14 ուսանողիկների դաժան սպանությունը հիմք դրեց երկու գլոբալ քարոզարշավներին՝ «Ընդդեմ Չենդերային բռնության ակտիվության 16-օրյակ»-ը և «Սպիտակ ժապավեն» քարոզարշավը: 1991թ.-ից. ավելի քան 2,000 կազմակերպություններ 156 երկներում մասնակցել են ամենամյա 16-օրյակի քարոզարշավին:

Այս 16-օրյա ժամանակահատվածում նշվում են նաև այլ կարևոր ամսաթվեր, ներառյալ դեկտեմբերի 1-ը՝ ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օրը և դեկտեմբերի 2-ը, Ստրկության վերացման միջազգային օրը, ինչպես նաև Դեկտեմբերի 6-ը, «Մոնրեալյան կոտորածի օրը»:

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք դիմել Ջինա Սարգիզովային՝ sargizova@unfpa.org, հեռախոս՝ 374 10 512038 կամ Անուշ Ավանեսյանին՝ anoush.avanesyan@undp.org, հեռախոս՝ 374 10 566073, լրացուցիչ 210: